ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 օգոստոսի 2019 թվականի N 69-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման N 1 հավելվածով և հիմք ընդունելով Ռիմա Զավենի Արևշատյանի ներկայացրած դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Ռիմա Զավենի Արևշատյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20012015-07-0012, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0205-0008/ 150,75 քառակուսի մետր հողակտորի նպատակային նշանակությունը համարել փոփոխված գյուղատնտեսական նշանակության հողերից, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա ըստ գործառնական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի՝ համաձայն նախագծով ներկայացվող հատակագծի:
2. Քաղաքացի Ռիմա Զավենի Արևշատյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20012015-07-0012, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0205-0008/ հողակտորում անասնագոմի և պարսպի կառուցման համար տալ շինարարության թույլտվություն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

4. Հողի նպատակային նշանակության փոփոխությունը ներառել հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

5. Վերը նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 2-րդ փողոց N 12/2:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 2
գ.Գետամեջ